ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՀԱՅԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ

Թիվ 55

13 հուլիսի 2020 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ ՊԱՐՈՆ՝
Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՊԱՐՈՆ ՄԱՐԶՊԵՏ

Արմավիրի մարզի Հայկավանի համայնքապետարանը Ձեզ է ներկայացնում Հայկավան համայնքի ղեկավարի կողմից 2020 թվականին հուլիսի 9-ին ընդունած թիվ 12 և 13 որոշումները:

Առդիր՝ 3 թերթ

Համայնքի ղեկավար՝ Ռ. Ղազարյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

## ՀԱՅԿԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

# ՈՐՈՇՈՒՄ

N 12 -Ա

09. հուլիսի 2020

### ՕՐԻՆԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ՄԻՆՉԵՎ 20% ԱՎԵԼ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արմավիրի մարզի Հայկավան համայնքի բնակիչ ՝ Սիբիրյաչկա Ոսկանի Առաքելյանին պատկանող սեփականաշնորհված հողամասը 1992թվականի սեփականաշնորհման հանձնաժողովի թիվ 3 որոշմամբ կազմել է 4600 քմ սեփականաշնորհված հողամաս: Քարտեզագրման և գույքագրման ժամանակ սեփականաշնորհված հողամասի փաստացի մակերեսը կազմել է 4925 քմ: Սեփականաշնորհված հողամասին կից ավել զբաղեցրած 325քմ հողամասը չի գտնվում Հ.Հ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում, չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

Ղեկավարվելով Հ.Հ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետով, Տեղական ինքնակառավարման մասին Հ.Հ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով Սիբիրյաչկա Ոսկանի Առաքելյանի դիմումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Օրինական սեփականաշնորհված հողամասին կից ավել զբաղեցրած 325 քմ հողամասը անհատույց սեփականության իրավունքով տրամադրել Սիբիրյաչկա Առաքելյանին (ծածկագիր 0115-0011):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար Ղազարյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
# ՀԱՅԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
# ՈՐՈՇՈՒՄ

09. հուլիսի 2020թ. N 13

## ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԸ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2009թվականի թիվ 1066-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայկավան համայնքի բնակիչների դիմումները

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Արմավիրի մարզի Հայկավան համայնքի բնակիչնրի սեփականությունը հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 6,1007 հա ցածրարժեք վարելահող հողատեսքը փոխադրել բարձրարժեք պտղատու այգի հողատեսքի համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար Ռ. Ղազարյան

Հավելված
Արմավիրի մարզի Հայկավան
Համայնքի ավագանու 2020թ.
Հուլիսի 9-ի №33 որոշման

2019թվականի գարնանը գյուղատնտեսական ցածրարժեք հողատեսքերից ավելի բարձրարժեք հողատեսքերի փոխադրման վերաբերյալ

| N | Հողամասի ծածկագիրը | Հողամասի սեփականատերը | Հողամասի մակերեսը /հեկտար/ | հողամասի նախկին հողատեսքը | հողամասի նոր/այգի/ հողատեսքը |
|---|---|---|---|---|---|
| 1 | 129-020 | Սարգսյան Արտավազդ | 0.3701 | վար.հող | Ծիրան |
| 2 | 129-022 | Պողոսյան Անուշ | 0.4272 | վար .հող | Ծիրան |
| 3 | 129-019 | Միրզոյան Աշոտ | 0.3641 | վար. հող | Ծիրան |
| 4 | 118-018 | Ներսիսյան Արմեն | 0.48 | վար.հող | Կեռաս |
| 5 | 126-032 | Սուքիասյան Սեւակ | 0.42 | վար.հող | Ծիրան |
| 6 | 126-027 | Սուքիասյան Սեւակ | 0.2 | վար.հող | Ծիրան |
| 7 | 134-022 | Բարսեղյան Վաչագան | 0.3485 | վար.հող | Կեռաս |
| 8 | 110-033 | Աբրահամյան Իսկուհի | 0.48 | վար .հող | Ծիրան |
| 9 | 110-034 | Սմոյան Մամո | 0.19 | վար. հող | Ծիրան |
| 10 | 110-032 | Աբրահամյան Իսկուհի | 0.43 | վար .հող | Ծիրան |
| 11 | 136-022 | Հարությունյան Սիրվարդ | 0.43 | վար. հող | Սալոր |
| 12 | 103-033 | Բարսեղյան Վաչագան | 0.4708 | վար. հող | Սալոր |
| 13 | 114-002 | Պետրոսյան Արա | 0.18 | վար .հող | Սալոր |
| 14 | 114-001 | Ներսիսյան Բուրաստան | 0.24 | վար .հող | Ծիրան |
| 15 | 125-010 | Մարտիրոսյան Աբել | 0.56 | վար .հող | Կեռաս |
| 16 | 125-008 | Մարտիրոսյան Աբել | 0.11 | վար .հող | Ծիրան |
| 17 | 127-002 | Հովսեփյան Բագրատ | 0.2 | վար .հող | Ծիրան |
| | 127-003 | Հովսեփյան Բագրատ | 0.2 | վար .հող | Ծիրան |
| Ընդամենը | | | 6,1007 | | |
| Որից | | | Ծիրան 3.6314 , Սալոր 1.0808, Կեռաս 1.3885 | | |

Հայկավան համայնքի ղեկավար՝ Ռ. Ղազարյան